

## Վ Ե Ր Ժ Ա Պ Ե Տ Ը

(Հրամօն Թէոփի)

### Ա.

- Ո՞վ ապրի;
- Ֆրանսիան,
- Անցնել չի կարելի;
- Սակայն ձեր մեծաւորին ասելու բան ունիմ:
- Ուրեմն սպասեցէք ալդտեղ:

Աս համառօտ խօսակցութիւնը տեղի ունէր՝ 1870 թուականի նոյնմբերի 14-ին, զիշերուակ տասնումէկ ժամին, ֆրանսիական Լուառի 16-րդ լառաջպահակի և մի քսանուվեց-քըսանուեօթը տարիկան երիտասարդի միջև։

Պահակն իմաց տուաւ բանակի լիսնապետին, որ քանիմի բոպէից լետով երեսաց վիշապեան չորս թիկնապահով։

- Ո՞վ ապրի, կրկնեց սպան:
- Ֆրանսիան, նորից պատասխանեց երիտասարդը։
- Ի՞նչ էք կամենում:
- Ձեր մեծաւորին ներկալանալ:
- Դրա համար լուրջ պատճառ ունիք։
- Լուրջ և ստիպողական։
- Շատ բարի, բայց դեռ պէտք է ձեր աշքերը կապենք,  
որ ապա թէ ներկալանաք։
- Կատարեցէք, ինչ որ պէտք է, միայն թէ շուտ։

Սպալի նշանով զինուորներից երկուսը երբ ձիերից իջան և թաշկինակով կապեցին երիտասարդի աշքերը, լիսնապետն անմիջապէս քալլերն ուղղեց դէպի ալն կացարանը, ուր մընում էր հազարապետ Առքիէն՝ Դամբրոն վոքրիկ զիսդում զետեղուած լրտեսող գումարտակի հրամանատարը։

Ալդ գումարտակը, որ բաղկացած էր մօտ հարիւր հե-

ծեալից, պատուէր էր ստացել հսկել թշնամուն և նրա ամեն մի շարժումը դիտել նրբ լիսնապետը ներս մտաւ, հաղարապետը, որ նոր էր վերջացրել զիշերուալ համար հրամաններ տալը, պատրաստում էր հէնց շորերով պառկելու սենեակի լատակին փառած լարդալից կոչտ անկողնու վրալ:

— Ի՞նչ էք կամենում, դիմեց նա ներս մտնող ենթասպալին:

— Պարոն հաղարապետ, — պատասխանեց ենթասպան, — ձեզ մօտ մի տեղացի երիտասարդ եմ բերել, որ մօտենալով մեր լառաջպահակին, փափագ է լաւտնել ձեզ հետ խօսելու:

— Ի՞նչ է ուզում ինձանից:

— Զգիտեմ, պարոն հաղարապետ, ալդ մասին կարող էք իրան հարցնել, նա ապասում է դռանը:

— Ներս բերէք:

Ցիսնապետը ներս բերելով երիտասարդին, ինքը հեռացաւ կից սենեակը, որտեղից հեշտութեամբ կարող էր լսել, եթէ մնձաւորը ձայն տար:

Հաղարապետի հրամանով երբ անձանօթը բաց արաւ իր աչքերի կապը, նրանք մնացին երես առ երես և միքանի րոպէ լուս դիտեցին իրար:

Անձանօթի երեսնարքը պէտ սլարդ դէմքերիցն էր, որտես հէնց առաջին անգամից հաճելի տպաւորութիւն են անում տեսնողի վրալ, նրա խոշոր աչքերը, որոնց մէջ անկեղծութիւն էր փալլում, վստահութիւն էին ներշնչում, միենուն աղղեցութիւնն էին անում դիմացինի վրալ նաև նրա՝ միքեէ հաստ շրթունքները, որոնք, կարծես, բացւում էին միմիան ճշմարտութիւն լալտնելու համար:

Հաղարապետը մօտ երեսուն տարեկան մի տղամարդ էր, որի արքական ու եռանդալից դէմքը քաջասրտութիւն և վըճռականութիւն էր արտալալուում:

— Ի՞նչ էք կամենում, վերջապէս դիմեց նա անձանօթին:

— Պարոն հաղարապետ, — պատասխանեց երիտասարդը, — եկել եմ մի շատ կարևոր տեղեկութիւն հաղորդելու:

— Խօսեցէք, լսում եմ ձեզ:

— «Ալստեղից մօտ չորս մղոն հեռու գտնուող Տ... գիւղի դպրոցի վարժապետն եմ, — ալսպէս սկսեց երիտասարդը. — բայց միաժամանակ կատարում եմ նաև շինական դատարանի գրագրի պաշտօնը, Ալսօր կէսօրից լետոյ մեր փոքրիկ գիւղն եկաւ պրուսական մի ջոկատ, որին առաջին անգամն էինք

տեսնում: Որովհետև գիւղապետը հիւանդ պառկած է, իսկ օդ-նականը զիւղից բացակալ, ալդ պատճառով ես հարկադրուած եղակ պատասխանել ջոկատի հրամանատար աւադ-սպալի հարցերին, ինձ տեսնելուն պէս նա հարցուիործ արաւ մեր գիւղի ունեցած միջոցների, քանի տնուոր լինելու, քանի ախոռ ունենալու մասին, ապա ասաց որ իրան առաջնորդեմ փոստառուն: Ազտեղ նա տեղեկութիւններ ժողովեց եղած լրագըրներից ու նամակներից և միւս սպաների հետ գնաց շինական դատարան, ուր եկել-սպասում էին արդէն մեացած սպաները: Անմիջապէս մի փոքրիկ խորհուրդ կազմացին, որի միաքը շատ լաւ հասկացալ...»

— Ուրեմն գուք գերմաներէն գիտէք, ընդհատեց նրան հազարապետը:

— Պարոն, ես լուենցի եմ. ալդ լեզուն բաւական ընտանի է ինձ:

— Շարունակեցէք ձեր խօսքը:

— Ենրանց խօսակցութիւնից իմացալ, որ եկած են լըրտեսելու մեր զիւղը, ուր պէտք է զիշերեն: Սակայն նրանց ալդ կարճ միջոցով մնալն իսկ բոլորովին չուարեցրել ու մնել զրութեան մէջ է դրել մեր խեղճ գիւղացոց, որովհետև հինգ հազար ֆրանկ պատերազմական տուգանք և ամեն տեսակ պաշարեղէն են պահանջում նրանցից:

«Գերմանացիք ստիպեցին ինձ, պարոն, տնից տուն շըրջել և լալտնել բնակիչներին, թէ իրանցից պահանջում է, որ ալդ զրամն ու պաշարեղէնը առաւօտեան վաղ-վաղ տանեն շինական դատարան:

«Սկզբում ես բացէիրաց մերժեցի ալդ՝ միանդամալն ան-արդարացի պահանջը. բայց նրանց սպառնալիքը՝ թէ գիւղը աւարի կառնենք, հարկադրեց ինչ հնաղանդուել:

«Սակայն ալս բոլորը չեն:

«Մեր գիւղացոց դառն քրտինքի դինը — քսան խեղճ գերլաստանի ունեցած-չունեցածը պահանջելուց լետով, գերմանացիք տեղաւորուեցին աւելի գեղեցիկ տների մէջ և նրանց տէրերին ստիպեցին իրանց տալ մառաններում ունեցած լաւ բաները, որից իտու սկսուեց մի լկտի կերուխում:

«Ալդ մի կատարեալ դժբաղլութիւն եղաւ այն գերդաստանների համար, որոնց լարիկի տակ ջահէլ կանաքը կալին, այն եղօր համար, որ կ սմենում էր իր քրոջ պատիւը պաշտ-

պանել, մէն ամուսնու համար, որ թոլլ չէր տալիս անպատճել իր կնոջը... Օ՛, զերմանացիք շատ անգութ բնաւորութեան տէր են, իսկ արքածութիւնը նրանց իսպառ կատաղի զաղաններ էր դարձրել:

«Ես տեսալ, պմրոն, ես իմ աչքով տեսալ, թէ ինչպէս թրի պատեանի հարուածներով՝ դուրս վանդեցին մի դժբաղդ ծերունու իր սեպհական տանից, որովհետև կամենում էր պաշտպանել իր 16 տարեկան թուան պատիւը, Ալդ քատմնելի տեսարանից լետով երբ տեսակ սպիտակահեր ծերունուն դողդոջուն բազուկները դէպի երկինք տարածած ու իր խորշումած ալտերի վրալից արտասուքը հոսելիս... սաստիկ զայրութից քիչ մնաց սիրտս պալթի. ուստի երդուեցի՝ դժբաղդ հալրենակիցներիս վրէմբ լուծել և ալդպիով ազատել նրանց բոլորովին կործանուելուց:

«Ալդ մտադրութեամբ մանրամասն տեղեկութիւններ ժողվեցի զերմանացոց գրաւած տների մասին, նկատեցի որ նրանց պահպանութիւնը շատ թոլլ է, իսկ պահակները կիսարրած դրութեան մէջ են, մէկ խօսքով՝ շատ հեշտութեամբ կարելի կը լինի լանկարծակիի բերել նրանց. Երբ մեր գիտի նամակաբերից էլ տեղեկացալ ֆրանսիական զառաջապահ-գնդի ճիշտ տեղը, եկատ որ զիտեցածներս հազորդեմ ձեզ»,

— Ի՞նչ նպատակով, — հարցրեց սպան, որին շատ էր լուզել երիտասարդի սրտաշարժ պատմութիւնը:

— Այն նպատակով, որ լսելի անեմ և ճանապարհ ցոլց տամ նրանց, որոնք կը կամենալին ինձ հետեւել:

Հազարամետը մնաց լուռ. նա իր թափանցող հալեացքը մի բոպէչաչափ բնելոց ուսուցչի՝ անկեղծութիւն արտավալտող դէմքի վրալ, և սակալն ալդարսդ զննումն իսկ բաւական եղաւ համոզելու նրան՝ թէ ուսուցչի խօսքերը ճշմարիտ են. Բայց հարցը անքան ծանրակշլո էր, որ անհրաժեշտ էր աւելի լուրջ հարցուփորձ:

— Սական ինչպէս իմանամ, սիրելի բարեկամ, — դիմեց նա երիտասարդին, — թէ դուք ճշմարիտն էք ստում, ինչպէս կարող էք կարծել, որ մի սպալ, հիմնուելով որնէ հասարակ տեղեկութիւնների վրալ, կը համաձալնի վտանդի ենթարկել իրան վստահացած զինուորների կեանքը. վերջապէս ինչ եռաշխատորութիւն էք լտալիս՝ ձեր ասածները հոստատելու համար:

— Կեանքս, պարոն հազարապետ:

— Զեր կեանքը... Ալժմ հաւատում եմ, որ ճշմարիտ են աս + ծներդ. Սակայն Բնչպէս կարող էք ապացուցանել, թէ գերմանացիք թողլ կը տան լանկարծակիի բերել իրանց, Գիտէք արդեօք, թէ քանի հոգի են նրանք.

— Այս, գիտեմ. նրանք ընդամենը երեսունուհինգ հոգի են, որոնցից մինը աւագ-սպալ է, իսկ չորսը ենթասպալար. Ալչ երեսունուհինգ հոգին ցրուած են հինգ զանազան տներում. Այն էլ գիտեմ, թէ ինչ է նրանց մտադրութիւնը. լուսաբացին պէտք է հեռանան գիւղից. Հիմա, ալս ժամիս, նրանց մեծ մասը արրած-շնթռկած է, իսկ միւս փոքրաթիւ մասը դեռ շարունակում է իր զեղլս կերուխումք. բայց հաստատ է որ ամենքն էլ իրանց ապահով են համարում անակնկալ պատահարից. Ուրեմն չպէտք է լսուածգել, պարոն հազարապետ. Ճեր կողմից բաւական է միայն մի վստահ քալլ և՝ առանց մի հատ գնդակ իսկ արձակելու երեսունուհինգ գերմանացի գերի կը-բռնէք. Հիմա, ալս գիշեր, լաջողութիւնն անկասկած է, բայց վաղը ուշ կը լինի. Ասածներիս իրեն երաշխաւորութիւն՝ ինձ կապել տուէք մի ծիռ վրալ և թողէք երկու ձիաւոր գան իմ երկու կողմից. Եթէ ասածներս սուս դուրս գան, եթէ թա-զրութիւնս կէտ առ կէտ չկատարուի, հրամալեցէք ուղեղս ցրիւ տալ.

Եւ ալդ եռանդադին խօսքելն արտասանելիս աղնիւ երիտասարդի գոյնը թռաւ ներքին լուզմունքից.

Հազարապետին ալնպէս էր թւում, թէ իր առջն կանգ-նած երիտասարդը՝ Քրանսիական մած լեղափոխութեան մին քաջարի հալրենասէրներից է, որոնք արիարար առաջ էին տարել ազգի պաշտպանութեան փառաւոր գործը, գործ՝ որի համար իրանց անձը չեն խնալել աղջութեան նեցուկ համար-ուած հերոս նսխնիքը.

Զգածուած ու գրաւուած վարժապետի այրական ազդու շեշտից, հազարապետը, երկու ձեռքը մեկնելով երիտասարդ լունցուն, բացականչեց.

— Իրաւ որ դուք մի լա. երիտասարդ էք!

Ապա լսածները ի մի ամփոփելով իր մոքի մէջ՝ երբ պատկերացրեց բոլոր հանգամանքները, նա միքիչ վարանեց. որովհեաւ ինքը միայն պաշտպանողական գիրք պէտք է բըռ-նէր Դամբրօն գիւղում, ինքը պարտաւոր էր միայն հսկել

թշնամու շարժումները։ Սպարապետի հրամանների մէջ լար-  
ծակման մասին ոչինչ չկար ասուած... Բայց արդեօք ինքը  
մեղանչած չի լինիլ, ևթէ մի ալղախի սիրուն պատեհ առիթը  
ձևաքից բաց թողնէ։

Նա ալլես չէր կասկածում վարժապետի վրայ, ալլ մի-  
այն զգում էր որ շատ բարեկաջող առիթ էր ներկալանում ի-  
րան։ Անկասկած էր նաև, որ զումարտակն զգալի կորուստ  
չի ունենալու Բացի դրանից, ով իմանա՞ւ արդեօք մի ալղ-  
ախի սիրուն բարեկաջող դիպուած նորից կը կրկնուի։

—Գնամնք, —արտասանեց նա արագութեամբ և վերջ  
տուաւ իր խորհրդածութիւններին։ —ով որ փորձանքների մէջ  
չի ընկնում, նա չի կարող որեէ բանի լուսար Շատ ճիշտ է  
ասուած, թէ քաղցը համարձակների բաժինն է։

Ապա կա՞ չիլով կից սենեակում իր հրամանին սպասող  
ևնթասպալին, խաղաղ ու հաստատուն ձախով պատուիրեց։

—Գիւղում փազ վշել տուէք, իսկ սպաներին իմացրէք,  
որ կէս ժամից լւտով մենք պէտք է մեր ձիերի վրայ լինինք։

## Բ.

Ակնդեցու հին ժամացոլցը կէս զիշերուակ ժամն էր խը-  
փում, երբ լսուն հոգուց բա զկացած վիշապեան ջոկատը թո-  
ղեց գիւղը։

Զոկատի հրամանատարն էր ինքը Առաքիէ հաղարապետը,  
հետն ունենալով օգնական մի լիէտընան, երեք լինապետ և  
հինգ տասնապետ։ Առաջին օգնական լիէտընանը, մի ենթա-  
սպալ և զումարտակի միւս անդամները մնացին Դամբրօնում,  
որոնք պէտք է պատրաստ զանուէին՝ հէնց առաջին նշանին  
ձի նստելու։

Ալդ զօրախմբակը՝ ունենալով լառաջապահներ քանի  
մի խուզալիկիներով, ինչպէս նաև վերջապահներ, սկսեց ա-  
ռաջ խաղալ անձրսաջրից փափկացած ճամբով։

Գիշերը մութն էր և ցուրտ։ Ճիւնախառն անձրնը, որ  
հիսոխի սառը քամին ըերում խիփում էր զինուորների երեսին,  
թէպէտ աւելի ևս տաժանելի էր դարձնում ուղին, բայց և  
ալնպէս նրանք անարդել առաջ էին գնում, որովհետև վար-  
ժապետը՝ որի մի կողմից հազարապետն էր գնում, միւս կող-  
մից մի ենթասպալ, մթութեան մէջ առաջնորդում էր նրանց։

Որտեղ ճանապարհը ներում էր, նրանք արագացնում էին ձիերի ընթացքը, Վերջապէս երկու ժամաշափ մեծ դը. ժուարութեամբ ճամբալ կտրելուց լեռով, նրանց ուղեցուցը լալտնեց, որ մատեցնել են Տ... գիւղին.

Հաղարապետն իսկոյն հրամակեց իր մարդկանց կանդ առնել, արագութեամբ անցաւ նրանց շարքերի առաջից և խիստ լութին պատուիրեց:

— Հրացան չարձակէք, — ասաց նա ցածր ձալնով, — ալլ թուր բանացրէք, եթէ հարկ լինի, լսում էք. առանց իմ հրամանի ոչ մի հրացան չպէտք է արձակուի:

Գիւղից մօտ հինգ վեց հարիւր մետր հեռու նորից կանդ առան. Հաղարապետը քառասուն հոգի ջոկեց, որոնք իջան ձիերից, ինչպէս նաև վարժապետը. իսկ մնացած տասը հոգին որպէս պահեստ, մի լիէ օտընանի հրամանատարութեամբ պէտք է պահպանութիւն անէին զինակիցների ձիերին:

Հետեւ կները զարարինաների ոտը քարձրացրած և մերկացրած սրերով՝ վարժապետի ու հաղարապետի առաջնորդութեամբ սկսեցին առաջանալ դէպի Տ... դիւղը.

Կատարելիք առաջին՝ վտանգաւոր և թէ խիստ կարեոր դործը զերման պահակին տիրելն էր. ուստի և փոքրիկ զօրախմբակը ամենից առաջ դէպի արն տունը դիմեց, ուր պահակն էր:

Ամեն մի պահակ՝ իւրաքանչիւր ժամը մէկ անգամապէտք է փոխուի, և թէպէտ զերմանացի պահակին իր տեղումն էր ալդ րոպէին, բայց քնած էր մի քարի վրալ նստած։ Ալդ նրա վերջին քունը եղաւ, նա ալևս չզարթեց. թրի մի հարուած՝ տեղնուտեղը պւտին կպցը նրան։

Առանց որեէ աղմուկի պահակին տիրելուց լեռով, լարձակուղները մտան սրահը, ուր տասը զերմանացի զինուորներ՝ անչափ խմելուց, դէսու դէն վայր թափուած խռըմփում էին. դրանք երբ քնից զարթեցին, արդէն զինաթափ ու կալանաւորուած էին։

Երիտասարդ լօռենցու միջոցով հաղարապետը լալտնեց նրանց, որ կեանքները իրանց հնազանդ լինելուցն է կախուած։

Ալդ առաջին կալանաւորների զէնքերը անմիջապէս պահեասին լանձնեց! ն իսկ իրանց վրալ պահապան կարգուեցին մի լիսնապետ և վիշապեան վեց զինուոր՝ զարարինաները ձեռքներին պատրաստի բռնած։

Զորախմբակը նոյն լաջողութեամբ տիրեց թշնամու բըռ-

նած հինգ տներից չորսին ևս Վարժապետն անսխալ կերպով մատնացող էր անում գերմանացոց տեղը, իսկ վիշապեան զինուորներն արդէն գիտէին իրանց անելիքը. երբ մտնում էին մրափած պրուսացիների կացարանը, առաջ ու առաջ ձեռք էին դցում նրանց զէնքերը և ապա թէ արթնացնում:

Պրուսացի զինուորներն ու իրանց սպաները, արբածութիւնից առաջացած խիստ խորը քնից անզգալացած լինելով, ոչ մի ընդդիմադրութիւն չէին անում:

Ֆրանսիացիների գալուց մի կէս ժամ լետու արդէն քսանուիննը (չհաշուած սպանուածը) գերմանացի էր լանձնուած պահակին, որի պահապանների թիւը հետզհետէ քառապատկուել էր:

Վերջին տունը, որի մասին նոյնպէս տեղեկութիւն էր տուել վարժապետը, գանվում էր գիւղի ծալրին: Անտեղ գնալիս ֆրանսիացիք լոյս նկատեցին տան ներսը, որտեղից պարզ լսում էին քէփ անողների աղաղակները:

Ազդ տան դասն առաջ մի մարդու դիակ կար ընկած: Խրիտասարդ լուենցին կռացաւ դիակի վրաւ, որ լաւ տեսնի ու մի սարսուս ազդող ճիչ արձակեց...

Տունը պատկանում էր այն դժբաղդ ծերունուն, որին պրուսացիք թրի պատեանի հարուածներով դուրս էին վուրնդել՝ թուան պատիւը պաշտպանել ուղելուն համար:

Անրազդ ծերունին գիտէր որ իր մատղաշ թոռը արբած զինուորների գրկումն է, ուստի կրկին լետ էր եկել, որպէսզի գոնէ աս անդամ ազատի նրան անպատութիւնից. բայց չկարողանալով ներս մտնել՝ բարկութիւնից, վշտից ու սաստիկ զալրութից արիւնը զլիսին էր խվել ու շանթահար կաթուածից վար ընկել անշնչացած:

Հազարապետի հրամանով միքանի զինուոր իսկոյն ուսները դէմ տուին ներսից փակուած դռանը և խորտակեցին:

Ներս մտնողների առաջ մի քստմնելի տեսարան բացուեց. սենեակի մէջ վերին աստիճանի անկարգութիւն էր տիրում. — պահարանները տակնուվրալ, կահ-կարասիքը կոտրատուած, ապակիները փշրուած-թափուած լատակի վրաւ, դէսուդէն շպրտած դատարկ շներ, որոնցից միքանիսի բերաններին՝ ծուխ արձակող մոմեր էին վառուած: Սենեակի ամրող լատակը ապականուած էր այնպիսի աղտեղութիւննե-

բով, որոնք ցուց էին տալիս, թէ ինչ ու ինչ փնթի բաներ էին կատարուել...

Սակայն ալդ ղեռ ամենավատթարը չէր զգուելի տեսա-  
րանից:

Անենեակի անկիւններից մէկում չօրս արբած ղերմանա-  
ցի վիճում էին իրար հետ անբաղդացած պատանունու համար,  
որ առանց զգեստի էր, իսկ գեղեցիկ մարմնի վրա ան-  
գութ բռնութեան հետքեր էին երեսում...

Հէք աղջիկն ալժմ ալլևս չէր դիմադրում, ընդհակառակը՝  
նա ծիծաղում էր իր անխիղճ դահիճների արտասանած ան-  
պարկեշտ խօսքերից: Բայց նրա ալդ ծիծաղը նման էր մետա-  
ղէ տախտակի թրթուցին, իսկ կուսական հալեացքը կորցրել  
էր իր նախկին պահառ արտալալտութիւնը... լիեզնը սարսա-  
փեց խելագարուել էր:

Ֆրանսիացինների երեալը զգաստացրեց գերմանացիններին,  
որոնք անմիջապէս թողնելով իրանց զոհը, կամեցան զէնք  
վերցնել:

Հազարապետը հէնց ալդ բանին էր սպահում. նրա մի  
նշանով ութ հրացան միասին թնդացին և տմարդի արարած-  
ները զլորուեցին լատակի վրա՝ իրանց արիւնը ևս խառնելով  
իրանց աղտեղութիւնների հետո..

Պապի ու թոռան վրէժը լուծուած էր:

#### Գ

Առաւօտեան վեց ժամին հազարապետ Առքիէն կարգի  
բերաւ իր խումբը. գերմանացիններին առանց մէջ, որ-  
պէսզի նրանք փախչելու փորձ անէին, նրանցից խլած զէն-  
քերը դարսեցին մի սալի վրալ ու հինգ դիակն էլ մի ուրիշ  
սալի վրալ զնելով՝ սկսեցին հետեւել իրանց լառաջապահնե-  
րին, իսկ ձեռք զցած երեսունուհինգ ձին արդէն ուղարկել  
էին բեգեառ դուրս բերուած գիւղացոց ձեռքով:

Վարժապետը լաւանեց թէ մի գերի պակաս է: Եւ ուղիղ.  
քսանուիննը կենդան ու հինգ էլ մեռած միասին անում էին  
երեսունուչորս, մինչդեռ վարժապետը երեսունուհինգ էր հա-  
շուել. իսկ երեսունուուհիգերորդ ձին ապացուց էր նրա հաշ-  
ուել ճիշտ լինելուն:

Ուրեմն պարզ էր թէ պրուսացիններից մէկը չկար՝ փա-  
խել էր. Ալդ փախստականին գտնելու համար արուած բոլոր  
խուղարկութիւնները զուր անցան:

Հազարապետը մտածեց, որ ալդ փախստականը երկի հիմա հասած պիտի լինի թշնամու լառաջապահներին։ Ալդ միտքը ստիպեց նրան՝ իրանց երթը փութացնելու։ որովհետև եթէ ճիշտ լինէր իր ենթադրութիւնը, այն ժամանակ գերմանացիք, լուր առնելով Տ... գիւղում անցած-դարձածի մասին, կըշտապէին գալու աւելի մեծ բազմութեամբ։

Բալց նախքան Տ... գիւղից հեռանալը, հազարապետը փափագ լալտնեց՝ քաջ լուենցուն իրանց հետ տաներւ։

—Երիտասարդ բարեկամ, եկէք գնանք մեր բանակը, —ասաց նա վարժապետին։ —Թշնամին կարող է ձեզ շատ նեղել ալստեղ, մինչդեռ մեր բանակում դուք բոլորովին սպահով կը լինիք։

—Յատուկ շնորհակալ եմ ձեր ալդ առաջարկութեան համար, —պատասխանեց երիտասարդ հայրենասէրը, —ալսօր աւելի, քան երբեցէ, ևս պարտաւոր եմ ալստեղ մնալ։

—Դուք յաւական դործ կատարեցիք ձեր գիւղի համար, ուստի արժանի էք որ ձեր արածի փոխարէն հատուցումն ստանաք։ Սկէք դնանք Դամբրօն, մեր սպարապետին կը ներկալացնեմ ձեզ։

—Անկարելի է, պամրոն հազարապետ, իմ տեղն ալստեղ է, ևս որեէ հատուցումն ստանալու միտք չեմ ունեցած։ ինչ որ արի, զրանով միան պարոքս կատարեցի և հիմա էլ պարտաւոր եմ ալստեղ մնալ։

—Բալց մնալով ալստեղ, զուք վտանգի էք ենթարկում ձեր կեանքը։

—Ո՛չ, ևս միան իմ պարտականութիւնն եմ կատարում դէպի մեր հասարակութիւնը, որի բարօրութեան համար պատրաստ եմ կեանքս էլ զոհ բերելու, Ազնիւ մարդը՝ տանջանքի ահից և կամ մահուան երկիւղից չի փախէիլ իր պարտականութիւնը կատարելուց։

—Զեր պարտականութիւնը համագիւղացիներիդ կործանումից աղատելն էր, ալդ բանը հօ ձեզ լաջողուեց, ալևս դրանից աւելի բնչ էք կամենում անել։

—Ուզում եմ հոգալ այն անբազդ հէք աղջկալ մասին, որին որբացրին պրուսացիք։ Պարտականութիւններիցս մինչ էլ ալդ է, ուստի պիտի աշխատեմ, եթէ հնար է, ալդ ևս ճըշտութեամբ կատարել։

—Դուք ոչ միան լու ֆրանսիացի էք, ալև մի աղնիւ-

մարդ, հասարակութեան ընտիր և օգտակար անդամ, ուրեմն թռղ  
օրհնուի ծնունդը. Երանէ կըլինէր ալն օրը մերչազգին, երբ  
հասարակութեան ամեն մի անգամ ձեզ պէս մտածէր ու գոր-  
ծէր... Այս, թռղ օրհնուի ձեզայների ծնունդը, — լուզուած  
բացականչեց հաղարապետը և գիրկն առնելով երիտասարդ  
հերոսին՝ ջերմադին համբուրեց նրա անարատ ճակատից. ա-  
պա ձի նստելով, հրամակեց շտապել:

Փոքրիկ զօրախումբը վերադարձաւ նուն ճամբով. որով  
եկել էր գիշերը:

Ֆրանսիացիք, առանց մի հատ մարդ անգամ կորցնելու,  
գերիների հնոտ հասան Դամբրօն առաւտեան տասը ժամին,  
ալսինքն ճիշտ ալն միջոցին, երբ գերմանական մի ստուար  
զօրախումբ մտաւ Տ... գիւղը. Ակդ նորեկ խմբին առաջնորդել  
էր ալն փախստականը; որին գտնել չկարողացան ֆրանսիացիք:

### Դ

Հաղարապետ Առքիէն գումարտակի մեծաւորի աստիճան  
ստացաւ և Պատուու Լէգէոնի շքանշանով զարդարուեց կուրծ-  
քը, իսկ ուր հարկն էր՝ արձանագրուեց զօրախումբի անունը:

Տ... գիւղի բնակիչներից մի ցածահոգի անպիտան՝ մեռ-  
ցնելով իր խիղճը, մի զզուելի գործ կատարեց. նա մատնեց  
աղնիւ զարժապետին, ալսինքն ալն մարդուն, որ իր կեանքը  
վտանգի ենթարկելով՝ ամբողջ գիւղի աղատիչն էր եղել.

Գերմանացիք՝ զինուորական դատարանով մահուան դա-  
տապարտեցին երիտասարդ հալրենասէրին:

Այն իսկ օրը, երբ Առքիէն հաղարապետն իր ծառալու-  
թեան հատուցումն էր ստանում, հէնց միւնուն օրն էլ  
պրուսացոց զնդակներից ընկաւ լուսեցի աշնիւ հերոսը, որով  
սուրբ գործի—հալրենիքի ազատութեան համար ընկած նա-  
հատակների թիւը մէկով ևս աւելացաւ:

Թռղ լաւէտ անմոռաց մնալ ալդպիսիների լիշտակը:

Քանիմի օրից լետու գիւղից դուրս մի մեծ ծառի տակ  
մատնիչ գիւղացու դիակը գտնուեց. նրան խեղդաման էին առ-  
բել իր համագիւղացիք՝ որպէս արդար վրէժ հալրենասէր վար-  
ժապետի մահուան:

Ֆրանս. թարգմ. ԼԵՒՈՆ Մ. Ա. Դ.